

Հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան

գրականության ինստիտուտի

տնօրենի ժամանակավոր

պաշտոնակատար

բ.գ.թ. Հերիքնազ Որսկանյան



Կարծիք

«Հակոբ Օշականի փոքր արձակը (հոգևորի և բնագդայինի խնդիրը)» թեմայով

թեկնածուական ատենախոսության մասին

ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նորագույն գրականության բաժնի 16.06.2023թ. նիստին մասնակցում էին բաժնի վարիչ բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Աբրահամյանը, բ.գ. թեկնածուներ Լիլիթ Սեյրանյանը, Սաթենիկ Ավետիսյանը, կրտսեր գիտաշխատողներ Արա Զարգարյանը, Միհրան Շովիաննիսյանը:

Արտահայտվեցին բ.գ.թ. Լ.Սեյրանյանը, բ.գ.թ. Ս.Ավետիսյանը, Մ.Շովիաննիսյանը, Ա.Զարգարյանը: Նիստը ամփոփեց բաժնի վարիչ բ.գ.դ. Ս.Աբրահամյանը:

Նշվեց, որ Մ. Ղազարյանի՝ ներածությունից, «Ժողովրդական բանարվեստի և կենդանի ավանդույթի համապատկերը», «Հերոսների դրաման փոքր արձակում», «Եղեռնի արձագանքը՝ փոքր արձակում» վերնագրերով երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործած գրականության ցանկից բաղկացած աշխատանքը թեմայի հանգամանալի ուսումնասիրությամբ հատկանշվող հաջողված նմուշ է: Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է ընդգծված միջզիտակարգային նկարագրով՝ գրականագիտական ժամանակակից մեթոդակազմի, ազգագրական-բանահյուսական լուկալումների և հոգեբանական՝ գենդերային և հոգեֆիզիոլոգիական տեսաբանական հայեցակետի զուգակցմամբ, ազգային ինքնության կարևորմանն ուղղված մտահոգություններով: Նյութից բխող թեմատիկ կարևոր շեշտադրումները, որոնք պայմանավորել են աշխատանքի կառուցվածքը, ատենախոսին թեմայի համակողմանի քննության հնարավորություն

են ընձեռել: Ղազարյանը խորությամբ ուսումնասիրել է ոչ միայն Օշականի քնազիրը նախընթաց գրական ավանդույթի մեջ, այլև հարցի պատմությունը, անդրադարձել մեծ գրողի գրական ուղղությանը, նրա գեղարվեստի վրա համաշխարհային գրամտածողության ներազդման դաշտին, նրա փոքր արձակի ժանրային նկարագիրը պարզող իրողությունների՝ իր թեմայի հետազոտման շրջանակում կատարելով թարմաշունչ դիտարկումներ և ընդհանրացումներ:

Առաջին գլուխ «Բարքերի ու սովորույթների համապատկերը» և «Բանահյուսական պատմությունը՝ քնաշխարհի քնարական պատկեր» ենթագլուխներում վեր է հանվում Օշականի փոքր արձակի բարացուցական նկարագիրը Հիպոլիտ Տենի պատմամշակութային լմբոնումների լույսով, հոգևորի և քնազդայինի փոխառնչության տեսանկյունից:

Երկրորդ գլուխ «Փոքր մարդու» դրաման գրողի դիտակետում, «Գենդերի սոցիալական հոգեբանության դրսորումը «Խոնարհները» պատմվածաշարում», «Դեռահաս հերոսների հասունացման հոգեբանական նրբերանգները» վերնազրելով ենթագլուխներում հաջորդիվ քննության առարկա են դառնում օշականյան փոքր արձակի հերոսների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները ֆրոյդյան հոգեվերլուծության և արդի հոգեբանության տեսական լմբոնումների տեսանկյունից, գենդերային նույնականության օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի, կենսաբանական և հոգեբանական սեռերի տարբերության դիտարկմամբ, հերոսների սեռական զարգացման հոգեբանական առանձնահատկությունների քննությամբ: Հատկապես ուշագրավ է դեռահասների ինքնաճանաշողության ընթացքում զգայականից դեպի իմացականն ուղղված վեկտորի մատնանշումը:

Ատենախոսության երրորդ գլուխ ««Մահուան ծաղիկներ» շարքը» և «Եղեռնի գեղարվեստական արձագանքը» ենթագլուխներում տրվում է օշականյան եղեռնապատումի նկարագիրը փոքր արձակի շրջանակում՝ հոգևորի և քնազդայինի հակադրամիասնության դրսորումների տեսանկյունից, հայ-թուրքական խնդրին ուղղված օշականյան դիտանկյան լուսաբանմամբ: Վերոնշյալ բոլոր խնդիրները քննաբանվում են Օշական գրադատի տեսաբանական հայեցակարգի ներքո:


Ընդհանրության մեջ հաջողված ուսումնասիրությունը կշահեր, եթե Օշականի փոքր արձակում հայտնակերպվող հոգևորի և բնազդայինի առնչակցության խնդիրը դիտարկվեր նաև հետևյալ տեսանկյուններից.

1. Քսաներորդ դարասկզբի արևմտահայ և հաջորդիվ սփյուռքահայ գրական իրազործումներում ակնբախ է հետաքրքրությունը սեռի խնդիրների նկատմամբ: Դա մասամբ պայմանավորված էր տվյալ ժամանակաշրջանի մշակութային գիտակցության և գրամտածողության վրա ֆրոյդյան տեսության ներազդմամբ, որն իր արձագանքն էր գտել նաև հայ իրականության մեջ, մասամբ «Հայ հոգու» ինքնանույնականացման վերականգնման, ազատության, «առնականացման» պահանջով, որն իր դրսնորումը ստացավ թե՝ հեթանոսական գրական շարժման ներկայացուցիչների գաղափարագեղագիտական համակարգում և թե՝ հետո՝ «արու շեշտի» պահանջով, «Մենք»-ի սերնդի ընկալումներում: Հետաքրքիր և օգտակար կյիներ սեռի և սիրո, հոգևորի և բնազդայինի օշականյան ըմբռնումը քննել սերնդակիցների գեղարվեստական վաստակի հետ անհրաժեշտ գուգահետի մեջ, ապա և գրական ավանդույթի առաջընթաց երկերում՝ նրա փոքր արձակի հնարավոր ազդեցության նկատառումով: Վազգեն Շուշանյանի, Շահան Շահնուրի, Նիկողոս Սարաֆյանի («Իշխանուհին»), Զարեհ Որբունու գեղարվեստական իրազործումները նշված չափումով թերևս որոշ իմաստով սնվում են Օշականի արձակից: Խորհրդահայ հեղինակների երկերում ևս նկատվում է նրա՝ հետազիծը. օրինակ՝ Աղասի Այվազյանի «Պորտը վրան» պատմվածքի դիպաշարը և գաղափարը զարմանալիորեն կրկնում են Օշականի «Առաջին արցունքը» երկի համապատասխան կողմերը, իսկ «Ընտանիքի հայրը» վիպակի դավաճանված տղամարդու դրաման հիշեցնում է Օշականի «Տոպիհճը»-ը, մասնավորապես կնոջ վերադարձի և ամուսնու վերաբերմունքի դրվագով:
2. Ասենախոսը հետաքրքիր ընդհանրացումներ է կատարում երոսի և թանատոսի, կյանքի և մահվան բազմաբարդ փոխառնչության օշականյան հայեցակետի կապակցությամբ, և հերոսների սահմանային հոգեվիճակի


ընկալման առումով հեղինակի համար թեմայի քննաբանման նոր դիտանկյուն կարող էր բացել էքզիստենցիալ հոգեբանության հայեցակետը:

Ուսումնասիրությունն անշուշտ կարող է հարստացնել Օշականի գեղարվեստական արձակի քննաբանման մետարժագիրը, բավարարում է բանասիրական գիտությունների թեկնածուին ներկայացվող պահանջները, ուստի միջնորդում ենք ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում գործող 012 մասնագիտական խորհրդին Մ.Ղազարյանին շնորհելու իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Հայ նորագույն գրականության բաժնի

վարիչ՝  Բ.Գ.Դ., պրոֆ. Սուրեն Աբրահամյան

Բ.Գ.Դ., պրոֆ. Սուրեն Աբրահամյանի ստորագրությունը հաստատում եմ՝

գիտքարտուղար՝  Բ.Գ.Թ. Հերիքնազ Որսկանյան